

Ընդունված է
ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի
խորհրդի
2015թ. հոկտեմբերի 20-ի նիստում
ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի
խորհրդի նախագահի **Բ.Ս.Ղազինյան**



Հաստատված է
ԵՊՀ գիտական խորհրդի
2015թ. հոկտեմբերի 22 ի նիստում
ԵՊՀ գիտական խորհրդի
նախագահի **Ս.Զ.Սիմոնյան**



ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կանոնադրությունը սահմանում է Երևանի պետական համալսարանի (այսուհետ՝ ԵՊՀ) իրավագիտության ֆակուլտետի (այսուհետ նաև՝ ֆակուլտետ) գործունեության իրավական հիմքերը:
2. Ֆակուլտետը ԵՊՀ ֆակուլտետի օրինակելի կանոնադրության հիման վրա մշակում և ֆակուլտետի գիտական խորհրդում ընդունում է ֆակուլտետի կանոնադրությունը, որը հաստատվում է ԵՊՀ գիտական խորհրդում:
3. Սույն կանոնադրության մեջ փոփոխությունները և լրացումները կատարվում են նույն կարգով:
4. Ֆակուլտետը ստեղծվում, վերակազմակերպվում կամ լուծարվում է ԵՊՀ հոգաբարձուների խորհրդի որոշմամբ:
5. Ֆակուլտետի կանոնադրության և ԵՊՀ ֆակուլտետի օրինակելի կանոնադրության դրույթների միջև հակասություն առաջանալու դեպքում գործում են օրինակելի կանոնադրության դրույթները:
6. Ֆակուլտետի պաշտոնական անվանումն է՝ հայերեն՝ Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետ, ռուսերեն՝ Юридический факультет Ереванского Государственного Университета անգլերեն՝ Faculty of Law of the Yerevan State University
7. Ֆակուլտետի գտնվելու վայրն է՝ ք. Երևան, Ալեք Մանուկյան փ. 1
8. Ֆակուլտետը ԵՊՀ կառուցվածքային ստորաբաժանում է, որն իր կանոնադրությանը համապատասխան օժտված է իրավունքներով և կրում է պարտականություններ:
9. Ֆակուլտետն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, ԵՊՀ կանոնադրությամբ, իր կանոնադրությամբ, ինչպես նաև ԵՊՀ մարմինների, ֆակուլտետի կառավարման մարմնի՝ իրենց իրավասության շրջանակում ընդունած իրավական ակտերով:

10. Ֆակուլտետն ունի կնիք, իր անվանամբ դրոշմակնիք (հայերեն, ռուսերեն, անգլերեն լեզուներով), սահմանված կարգով կարող է ունենալ նաև պաշտոնաթուղթ (բլանկ), խորհրդանիշ և անհատականացման այլ միջոցներ:

II. ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆԸ

11. Ֆակուլտետը ԵՊՀ գիտակրթական գործունեություն իրականացնող հիմնական ստորաբաժանումներից մեկն է, որն իրականացնում է բարձրագույն մասնագիտական և հետբուհական կրթություն մեկ կամ մի քանի մասնագիտություններով:

12. Ֆակուլտետն իր իրավասության սահմաններում իրավունք ունի ընդունելու որոշումներ, եթե դրանք չեն հակասում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ԵՊՀ կանոնադրությանը, ԵՊՀ ներքին իրավական ակտերին և ֆակուլտետի կանոնադրությանը:

13. Ֆակուլտետը, ելնելով իր կողմից իրականացվող ուսումնական, մանկավարժական, մեթոդական, գիտական, ուսումնաօժանդակ և տեխնիկական աշխատանքներից, ըստ սահմանված չափանիշների, կազմում է իր հաստիքացուցակի նախագիծը և ներկայացնում ԵՊՀ ռեկտորին:

14. ԵՊՀ եկամուտների և ծախսերի տարեկան նախահաշվով ԵՊՀ հոգաբարձուների խորհրդի որոշմամբ ֆակուլտետին կարող են հատկացվել ֆինանսական միջոցներ, որոնք ֆակուլտետը տնօրինում է սահմանված կարգով:

III. ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

15. Ֆակուլտետի կառավարման մարմիններն են ֆակուլտետի գիտական խորհուրդը (այսուհետ նաև՝ գիտական խորհուրդ) և ղեկանը:

16. Ֆակուլտետի կառավարման կոլեգիալ մարմինը գիտական խորհուրդն է, որի նախագահը ֆակուլտետի ղեկանն է:

17. Ֆակուլտետի գիտական խորհրդի անդամների թիվն ամրագրվում է ֆակուլտետի կանոնադրությամբ:

18. Գիտական խորհուրդը կազմված է ի պաշտոնե, հրավիրյալ և ընտրովի անդամներից: Գիտական խորհրդի անդամների թիվը 42 է: Գիտական խորհրդի ի պաշտոնե և հրավիրյալ անդամների թիվը չի կարող գերազանցել գիտական խորհրդի կազմի 50 տոկոսը:

19. Գիտական խորհրդի կազմի մեջ ի պաշտոնե մտնում են ղեկանը՝ որպես նախագահ, նրա տեղակալները, ամբիոնների վարիչները, մեթոդական խորհրդի նախագահը և արհքյուրոյի նախագահը:

20. Գիտական խորհրդի կազմում ընդգրկվում են ֆակուլտետի գործունեության և մասնագիտությունների հետ կապված արտահամալսարանական ու արտաֆակուլտետային մասնագետներ՝ գիտական խորհրդի կազմի մինչև 20 տոկոսի չափով:

21. Գիտական խորհրդի անդամների առնվազն 50 տոկոսն ընտրովի անդամներն են: Գիտական խորհրդի ընտրովի անդամների թեկնածությունները համամասնորեն առաջադրում են ֆակուլտետի կառուցվածքային ստորաբաժանումները:

Գիտական խորհրդի ընտրովի անդամներ կարող են առաջադրվել միայն տվյալ ստորաբաժանման հիմնական և ներքին համատեղությամբ աշխատողները:

22. Գիտական խորհրդի անդամների 25 տոկոսը սովորողներն են, որոնց ընտրությունն իրականացնում է ֆակուլտետի ուսանողական խորհուրդը:

23. Գիտական խորհրդի լիազորությունների ժամկետը 5 տարի է: Գիտական խորհրդի լիազորությունների ավարտից մեկ ամիս առաջ դեկանը ԵՊՀ ռեկտորի հաստատմանն է ներկայացնում գիտական խորհրդի անդամների նոր ցուցակը:

24. Ֆակուլտետի գիտական խորհուրդը՝

1) ԵՊՀ ֆակուլտետի օրինակելի կանոնադրության հիման վրա ընդունում է ֆակուլտետի կանոնադրությունը, փոփոխություններ ու լրացումներ է կատարում դրանում.

2) ընդունում է ֆակուլտետի զարգացման հայեցակարգը և ծրագիրը,

3) ընդունում է որոշումներ ֆակուլտետի կրթական, գիտական աշխատանքի, միջազգային կապերի և այլ հարցերի վերաբերյալ.

4) սահմանված կարգի համաձայն իրականացնում է ֆակուլտետի դեկանի, ամբիոնների վարիչների և պրոֆեսորադասախոսական համակազմի ընտրությունը.

5) լսում է ֆակուլտետի դեկանի ամենամյա հաշվետվությունը և գնահատում նրա գործունեությունը.

6) ԵՊՀ ռեկտորին ներկայացնում է առաջարկություններ ֆակուլտետի կառուցվածքում ամբիոններ և այլ կառուցվածքային ստորաբաժանումներ ստեղծելու, լուծարելու, վերակազմավորելու վերաբերյալ.

7) առաջադրում է ԵՊՀ հոգաբարձուների խորհրդում և ԵՊՀ գիտական խորհրդում ֆակուլտետի ներկայացուցիչների թեկնածուներին.

8) ԵՊՀ ռեկտորի հաստատմանն է ներկայացնում ֆակուլտետի ուսումնական պլանները.

9) քննարկում է ֆակուլտետի ամբիոնների և այլ կառուցվածքային ստորաբաժանումների ուսումնամեթոդական և գիտահետազոտական աշխատանքների մասին հաշվետվությունները.

10) սահմանված կարգով քննարկում է հայցվող գիտական կոչումը ստանալու երաշխավորության հարցը.

11) հաստատում է ասպիրանտների անհատական պլանները, ինչպես նաև ասպիրանտների և հայցորդների տարեկան ատեստավորման արդյունքները.

12) լսում է ֆակուլտետում կատարվող գիտական թեմաների վերաբերյալ հաշվետվությունները, դրամաշնորհների, գիտակրթական գործողումների վերաբերյալ հաղորդումները,

13) իր կազմից ձևավորում է մշտական և (կամ) ժամանակավոր հանձնաժողովներ,

14) առաջարկություններ է ներկայացնում պատվավոր կոչումներ շնորհելու, մրցանակներ, անվանական կրթաթոշակներ տալու, ԵՊՀ շքանշանով և մեդալով պարգևատրելու, հանրապետական ու միջազգային պարգևների և կոչումների համար թեկնածուների վերաբերյալ.

15) լուծում է սույն կանոնադրությունից և ԵՊՀ այլ ներքին իրավական ակտերից բխող՝ ֆակուլտետի ուսումնամեթոդական և գիտահետազոտական գործունեությանը վերաբերող այլ հարցեր:

25. Ֆակուլտետի գիտական խորհրդի նիստերը գումարվում են ուսումնական տարվա ընթացքում առնվազն 8 անգամ: Ֆակուլտետի գիտական խորհրդում որոշումներն ընդունվում են գիտական խորհրդի նիստին ներկա անդամների ձայների պարզ մեծամասնությամբ, եթե Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, սույն կանոնադրությամբ կամ ֆակուլտետի կանոնադրությամբ այլ բան նախատեսված չէ:

Ֆակուլտետի գիտական խորհրդի որոշումները պարտադիր են ֆակուլտետի աշխատողների և սովորողների համար:

26. Գիտական խորհրդի նախագահը դեկանն է, որը հրավիրում է գիտական խորհրդի նիստերը:

Դեկանի ընտրության և հաշվետվության նպատակով հրավիրվող խորհրդի նիստերը վարում է գիտական խորհրդի կողմից ընտրված նախագահողը: Դեկանը չի կարող լինել այդ նիստերի նախագահողը:

Դեկանի պաշտոնանկության հարցը քննարկելու նպատակով հրավիրվող նիստը վարում է ԵՊՀ ռեկտորը:

Գիտական խորհրդի նիստի նախագահողը բացում և փակում է նիստը, առաջարկում է նիստի աշխատակարգը, ապահովում է դրա կատարումը, քվեարկության է դնում օրակարգի հարցերը և անհրաժեշտության դեպքում կազմակերպում է հաշվիչ հանձնաժողովի ընտրությունը:

27. Գիտական խորհրդի քարտուղարին գիտական խորհրդի կազմից դեկանի ներկայացմամբ նշանակում է ԵՊՀ ռեկտորը:

28. Գիտական խորհրդի նիստն իրավագոր է խորհրդի անդամների ցուցակային կազմի երկու երրորդի ներկայության դեպքում:

Քվեակազմի (քվորումի) բացակայության դեպքում հայտարարվում է գիտական խորհրդի նիստի անցկացման նոր ժամանակը՝ նույն օրակարգով:

Գիտական խորհրդում դեկանի ընտրության և պաշտոնանկության, գիտամանկավարժական պաշտոնների տեղակալման, ամբիոնների վարիչների ընտրության մրցույթների քվեարկությունը կատարվում է գաղտնի ընթացակարգով:

29. Գիտական խորհրդի նիստերին խորհրդակցական ձայնի իրավունքով կարող են մասնակցել ԵՊՀ ռեկտորը կամ պրոռեկտորը:

30. Գիտական խորհրդի կողմից դեկանի ամենամյա հաշվետվությունը լսելու նիստում գիտական խորհուրդը քվեարկությամբ գնահատում է դեկանի գործունեությունը: Դեկանի գործունեությունը դրական գնահատականի չարժանանալու դեպքում ԵՊՀ ռեկտորը մեկ շաբաթվա ընթացքում հրավիրում է գիտական խորհրդի նիստ՝ դեկանին անվստահություն հայտնելու հարցի քննարկման և որոշում ընդունելու համար:

Դեկանին անվստահություն հայտնելու գիտական խորհրդի նիստի ընթացքում ընթացակարգային խախտումներ հայտնաբերելու դեպքում ԵՊՀ ռեկտորը հնգօրյա ժամկետում՝ մինչև պաշտոնանկության նպատակով հրավիրված նիստը, գիտական խորհրդում նշանակում է նոր քվեարկություն:

31. Դեկանին պաշտոնանկ անելու մասին որոշումն ընդունվելու դեպքում ԵՊՀ ռեկտորը հնգօրյա ժամկետում լուծում է դեկանի հետ կնքված աշխատանքային պայմանագիրը:

32. Գիտական խորհրդի նիստերն արձանագրվում են: Արձանագրության մեջ նշվում են նիստի անցկացման ժամանակը, նիստին մասնակցող անդամների անվանացանկը, օրակարգի հարցերը, ելույթների հակիրճ բովանդակությունը, քվեարկության դրված հարցերը, քվեարկության արդյունքները և ընդունված որոշումները: Արձանագրությունը ստորագրում են նիստը նախագահողը և քարտուղարը, ովքեր պատասխանատու են արձանագրությունը ճիշտ կազմելու համար: Նիստի օրակարգը և ընդունված որոշումները տասն աշխատանքային օրվա ընթացքում ենթակա են հրապարակման ԵՊՀ ինտերնետային կայքում:

33. Ֆակուլտետի գիտական խորհրդում որոշումներն ընդունվում են խորհրդի նիստին ներկա անդամների ձայների պարզ մեծամասնությամբ, բաց քվեարկությամբ, եթե գիտական խորհուրդն այլ որոշում չի կայացրել:

34. Գիտական խորհրդի որոշումները պարտադիր են ֆակուլտետի ստորաբաժանումների, աշխատողների և սովորողների համար:
35. Ֆակուլտետի գործունեությունը կազմակերպում և ղեկավարում է ֆակուլտետի ղեկանը՝ իր իրավասության սահմաններում, ԵՊՀ և սույն կանոնադրության համաձայն:
36. Ֆակուլտետի ղեկան կարող է ընտրվել այն դոցենտը կամ պրոֆեսորը, որն ունի գիտությունների թեկնածուի կամ դոկտորի գիտական աստիճան:
37. Դեկանն ընտրվում է ֆակուլտետի գիտական խորհրդում՝ գաղտնի քվեարկությամբ՝ 5 տարի ժամկետով: Դեկանի պաշտոնում ընտրված է համարվում ֆակուլտետի գիտական խորհրդում ամենաշատ, բայց առնվազն մասնակիցների ձայների կեսից ավելի ձայներ հավաքած թեկնածուն: Ընտրությունների արդյունքների հիման վրա ընտրված ղեկանին պաշտոնի է նշանակում ԵՊՀ ռեկտորը և սահմանված կարգով կնքում է պայմանագիր՝ 5 տարի ժամկետով: Ֆակուլտետի ղեկանն իր պաշտոնը կարող է զբաղեցնել ոչ ավելի, քան երկու ժամկետ անընդմեջ: Դեկանի ընտրությունը կազմակերպվում և իրականացվում է ԵՊՀ գիտական խորհրդի կողմից հաստատված ղեկանների ընտրության կանոնակարգին համապատասխան:
38. Դեկանի պաշտոնին թեկնածուներ առաջադրելու, ընտրություններ անցկացնելու և ղեկանին պաշտոնում հրամանագրելու կարգը սահմանվում է ղեկանի ընտրության ընթացակարգով:
39. Ֆակուլտետի ղեկանը՝
- 1) ղեկավարում է ֆակուլտետի կրթական, գիտական, արտադրական, միջազգային և այլ գործունեությունը.
 - 2) ապահովում է ԵՊՀ մարմինների և ֆակուլտետի գիտական խորհրդի որոշումների կատարումը.
 - 3) ԵՊՀ ռեկտորի հաստատմանն է ներկայացնում ղեկանի տեղակալների թեկնածությունները.
 - 4) սահմանված կարգով ԵՊՀ ռեկտորին ներկայացնում է առաջարկություն՝ ուսանողներին հեռացնելու, նրանց ուսանողական իրավունքները վերականգնելու վերաբերյալ.
 - 5) սահմանված կարգով ԵՊՀ ռեկտորին ներկայացնում է առաջարկություն՝ ուսանողներին նույն կուրսում թողնելու, տեղափոխման (այլ բուհից կամ այլ մասնագիտությունից), ուսուցման ձևի փոփոխման, համապատասխան արձակուրդ ձևակերպելու վերաբերյալ.
 - 6) արձակում է հրաման ուսանողներին կուրսից կուրս փոխադրելու մասին.
 - 7) կազմակերպում է ուսումնական դասացուցակների կազմումը և վերահսկում է դրանց կատարումը.
 - 8) վերահսկում է ուսանողների գիտելիքների ստուգումների անցկացման գործընթացը.
 - 9) իր լիազորությունների շրջանակում խրախուսում, ինչպես նաև կարգապահական պատասխանատվության է ենթարկում ուսանողներին.
 - 10) իրականացնում է սույն կանոնադրությամբ և ԵՊՀ ներքին իրավական ակտերով նախատեսված այլ լիազորություններ:
40. Դեկանն իր լիազորությունների շրջանակում արձակում է հրամաններ, տալիս է հրահանգներ, որոնք պարտադիր են ֆակուլտետի կառուցվածքային ստորաբաժանումների, աշխատողների և սովորողների համար:
41. Դեկանն ունի տեղակալ(ներ), որին (որոնց) ղեկանի ներկայացմամբ նշանակում է ԵՊՀ ռեկտորը:

42. Ֆակուլտետի գիտական խորհրդի նիստերի միջև ընկած ժամանակահատվածում ֆակուլտետին առնչվող ընթացիկ հարցերը քննարկվում և լուծվում են դեկանատի նիստում, որին մասնակցում են դեկանը, դեկանի տեղակալը (տեղակալները), ֆակուլտետի կազմի մեջ մտնող ամբիոնների վարիչները, ֆակուլտետի գիտական խորհրդի քարտուղարը, ֆակուլտետի արհրյուրոյի և ուսանողական խորհրդի նախագահները: Դեկանատի նիստերն արձանագրվում են:

43. Ֆակուլտետի ուսումնամեթոդական և գիտահետազոտական հարցերի քննարկման համար ֆակուլտետում գործում է մեթոդական խորհուրդ, որի ստեղծման և գործունեության կարգը սահմանվում է ֆակուլտետի մեթոդական խորհրդի կանոնակարգով:

IV. ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

44. Ֆակուլտետի հիմնական ստորաբաժանումներն են ամբիոնները: Ֆակուլտետում գործում են նաև կենտրոններ:

45. Ամբիոնները ֆակուլտետի կրթագիտական գործընթացի կազմակերպման հիմնական կառուցվածքային ստորաբաժանումներն են:

46. Ամբիոնն ապահովում է ուսումնական գործընթացը, իրականացնում է մեթոդական և գիտական հետազոտություններ:

47. Ամբիոնները գործում են ԵՊՀ կանոնադրության, ԵՊՀ իրավական ակտերի և ֆակուլտետի կանոնադրության հիման վրա:

48. Ամբիոնի վարիչը կազմակերպում և վերահսկում է ամբիոնի ուսումնամեթոդական, գիտահետազոտական և այլ աշխատանքները, ներկայացնում է ամբիոնը ֆակուլտետի, համալսարանի, համալսարանական ստորաբաժանումների, ինչպես նաև արտահամալսարանական կազմակերպությունների հետ հարաբերություններում:

49. Ամբիոնի վարիչն ամբիոնի կարծիքն ստանալուց հետո մրցութային հիմունքներով ընտրվում է ֆակուլտետի գիտական խորհրդում՝ 5 տարի ժամկետով: Ֆակուլտետի գիտական խորհրդի որոշումը հաստատվում է ԵՊՀ գիտական խորհրդում՝ գաղտնի քվեարկությամբ, որից հետո ԵՊՀ ռեկտորն ամբիոնի վարիչի հետ կնքում է աշխատանքային պայմանագիր:

Ամբիոնի վարիչի պաշտոնի թեկնածուներ առաջադրելու, ընտրություններ անցկացնելու և ամբիոնի վարիչին պաշտոնում հրամանագրելու կարգը սահմանվում է ամբիոնների վարիչների ընտրության ընթացակարգով:

50. Ամբիոնի վարիչը պատասխանատու է ամբիոնի գործունեության համար: Ամբիոնի վարիչը, ըստ սահմանված կարգի, տարին մեկ անգամ հաշվետվություն է տալիս ֆակուլտետի գիտական խորհրդում: Ամբիոնի աշխատանքների մասին ամբիոնի վարիչի հաշվետվությունների ժամկետները և ձևերը սահմանում է գիտական խորհուրդը:

51. Ֆակուլտետի գիտական խորհրդում ամբիոնի վարիչի գործունեությունը դրական գնահատականի չարժանանալու դեպքում հնգօրյա ժամկետում հրավիրվում է գիտական խորհրդի արտահերթ նիստ, որի քննարկմանն է դրվում ամբիոնի վարիչին ետ կանչելու հարցը: Գաղտնի քվեարկությամբ ամբիոնի վարիչին պաշտոնանկ անելու մասին որոշում կայացնելու դեպքում գիտական խորհուրդը միջնորդում է ԵՊՀ գիտական խորհրդին՝ հաստատելու ամբիոնի վարիչի պաշտոնանկությունը:

52. ԵՊՀ գիտական խորհրդում գաղտնի քվեարկությամբ ամբիոնի վարիչին պաշտոնանկ անելու մասին որոշումն ընդունվելու դեպքում ԵՊՀ ռեկտորը լուծում է ամբիոնի վարիչի հետ կնքված աշխատանքային պայմանագիրը:

ԵՊՀ գիտական խորհրդում ամբիոնի վարիչի պաշտոնանկությունը չհաստատվելիս հնգօրյա ժամկետում հրավիրվում է ֆակուլտետի գիտական խորհրդի նոր նիստ: Ֆակուլտետի գիտական խորհրդի նիստի մասնակիցների ձայների երկու երրորդով ամբիոնի վարիչին պաշտոնանկ անելու մասին որոշումը վերահաստատելու դեպքում ԵՊՀ ռեկտորը լուծում է ամբիոնի վարիչի հետ կնքված աշխատանքային պայմանագիրը:

53. Ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմում ընդգրկված են պրոֆեսորները, դոցենտները, ասիստենտները և դասախոսները: Ամբիոնի կազմի մեջ մտնում են նաև ասպիրանտները և ուսումնաօժանդակ համակազմը:

54. Ամբիոնը, ելնելով կատարվող կրթական, գիտական, ուսումնաօժանդակ և տեխնիկական աշխատանքների ծավալից ու ձևերից, ըստ սահմանված կարգի, մշակում է իր աշխատողների ուսումնական բեռնվածությունը:

55. ԵՊՀ ամբիոնների պրոֆեսորադասախոսական կազմի աշխատանքի ընդունումն իրականացվում է համաձայն աշխատանքային պայմանագրի, որի կնքմանը նախորդում է բաց մրցութային ընտրությունը:

56. Ամբիոնների աշխատանքներն իրականացվում են ամբիոնների աշխատանքային ծրագրերին համապատասխան և ընդգրկում են ուսումնամեթոդական, գիտահետազոտական և աշխատանքի այլ տեսակները:

57. Ամբիոնի կրթական և գիտական հարցերը քննարկվում են ամբիոնի պրոֆեսորադասախոսական համակազմի նիստերում: Ամբիոնի նիստերին վճռական ձայնի իրավունքով մասնակցում են ամբիոնի պրոֆեսորադասախոսական համակազմի աշխատողները: Ամբիոնի նիստերին խորհրդակցական ձայնի իրավունքով կարող են մասնակցել դեկանը կամ տեղակալը, ամբիոնի գիտաշխատողները, ասպիրանտները, ուսումնաօժանդակ համակազմը և այլ աշխատողները:

Ամբիոնի նիստերը հրավիրվում են ըստ անհրաժեշտության, բայց ոչ պակաս, քան տարեկան ութ անգամ:

Ամբիոնի նիստերն արձանագրվում են: Արձանագրությունները ստորագրվում են ամբիոնի վարիչի ու գործավարի կողմից:

58. Ֆակուլտետի կենտրոնները ֆակուլտետի կառուցվածքային ստորաբաժանումներն են, որոնց ստեղծման և գործունեության կարգը սահմանվում է սույն կանոնադրությամբ:

60. Կենտրոնի գործունեության հիմնական հարցերը քննարկվում են կենտրոնի համակազմի նիստերում: Կենտրոնի ուսումնաօժանդակ համակազմը և այլ աշխատողներն այդ նիստերին մասնակցում են խորհրդակցական ձայնի իրավունքով:

61. Կենտրոնների ստեղծման, վերակազմակերպման և լուծարման վերաբերյալ որոշումն ընդունում է ԵՊՀ գիտական խորհուրդը՝ ֆակուլտետի գիտական խորհրդի առաջարկությամբ և ԵՊՀ ռեկտորի ներկայացմամբ:

62. Ֆակուլտետում գործում են էկոլոգիական իրավունքի կենտրոնը, ուսանողական իրավաբանական խորհրդատվության կենտրոնը (իրավաբանական կլինիկա), համակարգչային կենտրոն-գրադարանը, փոքր տպարանը:

63. Էկոլոգիական իրավունքի գիտաուսումնական կենտրոնը կազմավորվել է ԵՊՀ և ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի միջև կնքված փոխըմբռնման հուշագրի հիման վրա:

Էկոլոգիական իրավունքի կենտրոնի նպատակներն են՝ «էկոլոգիական իրավունք» դասընթացի արդյունավետության բարձրացումը, ուսումնական և ուսումնաօժանդակ գրականության ստեղծումն ու կատարելագործումը, ուսուցման ինտերակտիվ մեթոդների արմատավորումը և զարգացումը, ազգային էկոլոգիական քաղաքականության մշակմանն աջակցելը, էկոլոգիական օրենսդրության արդյունավետության բարձրացմանն աջակցելու գործում իրավագիտության ֆակուլտետի հնարավորությունների ընդլայնումը,

բնապահպանական ոլորտի իրավական ակտերի փորձաքննության, իրավական ակտերի հանրային լսումների անցկացումը, Հայաստանում տեղեկատվության մատչելիության, որոշումների ընդունման գործընթացին հասարակայնության մասնակցության և արդարադատության մատչելիության ապահովմանը նպաստելը:

Էկոլոգիական իրավունքի կենտրոնն իրականացնում է սույն կանոնադրությունից և իր նպատակներից բխող իրավասություններ:

64. ԵՊՀ Իրավաբանական կլինիկան (ուսանողական իրավաբանական խորհրդատվության կենտրոն) ստեղծվել է Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի Հայաստանյան գրասենյակի և ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի միջև կնքված փոխըմբռնման հուշագրի հիման վրա:

Իրավաբանական կլինիկայի նպատակներն են՝ պրակտիկ իրավաբանների պատրաստումը, գործնական գիտելիքներով և հմտություններով ուսանողներին ապահովելը, նրանց ընդգրկելը իրավակիրառ պրակտիկայում ծագող իրավական խնդիրների լուծման գործընթացին, ուսանողների մասնագիտական կողմնորոշմանը նպաստելը, իրավաբան-ուսանողի՝ որպես անհատի զարգացմանն աջակցելը, իրավաբանի մասնագիտության դերն ու նշանակությունը ճիշտ պատկերացնելուն և մասնագիտական ու անձնական վարքագծի բարոյական կողմերի կատարելագործմանն օժանդակելը, սոցիալապես անապահով անձանց իրավաբանական օգնություն ցուցաբերելը:

ԵՊՀ Իրավաբանական կլինիկան իրականացնում է սույն կանոնադրությունից և իր նպատակներից բխող լիազորություններ:

65. Համակարգչային կենտրոն-գրադարանը ստեղծվել է ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության (USAID) և ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի միջև կնքված համաձայնագրի հիման վրա:

Համակարգչային կենտրոն-գրադարանի նպատակներն են՝ կրթական և գիտահետազոտական գործընթացներին նպաստելը, սովորողներին իրավատեղեկատվական աղբյուրներով ապահովելը, գիտական հետազոտությունների իրականացման համար բարենպաստ միջավայր ստեղծելը, ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաներով դասավանդման գործընթացի կազմակերպումն ապահովելը:

Համակարգչային կենտրոն-գրադարանն իրականացնում է սույն կանոնադրությունից և իր նպատակներից բխող լիազորություններ:

66. Իրավագիտության ֆակուլտետում գործում է փոքր տպարան, որը ստեղծվել է ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության (USAID) և ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի միջև կնքված համաձայնագրի հիման վրա:

Տպարանը հրատարկման և օրինակների բազմացման միջոցով կրթական և գիտական գործընթացներն ապահովում է դասագրքերով, խնդրագրքերով, քննական առաջադրանքներով և ուսումնական գործընթացի բնականոն գործունեության համար անհրաժեշտ այլ նյութերով:

67. Ֆակուլտետում սահմանված կարգով կարող են ստեղծվել լաբորատորիաներ և այլ ստորաբաժանումներ:

Հավելված
ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի կանոնադրության
Ցուցակ ֆակուլտետի կառուցվածքային ստորաբաժանումների

Ֆակուլտետի կառուցվածքային ստորաբաժանումներն են.

1. Պետության և իրավունքի տեսության և պատմության ամբիոնը,
2. Սահմանադրական իրավունքի ամբիոնը,
3. Քաղաքացիական իրավունքի ամբիոնը,
4. Քրեական իրավունքի ամբիոնը,
5. Քաղաքացիական դատավարության ամբիոնը,
6. Քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնը (ներառյալ կրիմինալիստիկայի լաբորատորիան),
7. Եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոնը,
8. Էկոլոգիական իրավունքի գիտաուսումնական կենտրոնը,
9. Ուսանողական իրավաբանական խորհրդատվության (իրավաբանական կլինիկա) կենտրոնը,
10. Համակարգչային-կենտրոն գրադարանը,
11. Փոքր տպարանը: